6857

50

328
U-21

1929

1840 С.1930/820

2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

50

ԻՆՉ Ե ՎՈՐՈՇԵԼ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱԴՐԲԵՋ. ՍՈՑ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵԿԱՒՑՄԱՆ ԵՌԹԻՎ
ՀԱՄԱԴՈՒՄԱՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ադրբեջանի Սոց. Խորհ. Հանրապետության Ժողկոմխորհի յեվ
Դեր. Տնտ. Խորհրդի Գործերի Վարչության

328
Ա-21

ԲԱԳՈՒ — 1929

328
Ա-21

Напечатано в гостипографии „Красный Восток“
БАКПОЛИГРАФА БСНХ
Баку, Карантинная, 84.

Главлит 5362 | Заказ 4983

Тираж 3000 экземпл.

2001

К
Са 1429

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ԱՌԱՋԱԲԱՆ

Ադրբեջանի Խորհուրդների VI-րդ Համագումարը տեղի է ունեցել 1929 թվի ապրիլին Բագվում։ Խորհուրդների նախընթաց 5-րդ Համագումարը կայացել է 1927 թվին։ Այդպիսով Խորհուրդների Համագումարը լսել և զեկուցումներ Ադրբեջանի կառավարության, ինչպես նաև Լուսավորության և Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատների վերջին յերկու տարիների (1927 և 1928) գործունեության մասին։

Խորհուրդների VI Համագումարն իր աշխատանքները կատարել է Ադրբեջանի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի իրականացման սկզբին. հենց դրա համար էլ այդ Համագումարի վորոշումներն ավելի քան նշանակալից են, վորովհետև այդ վորոշումները կառավարությանը՝ հարարյա հնգամյա ժամանակամիջոցի համար՝ ցուցմունքներ են տվել։ Գյուղական տնտեսության և ժողովրդական լուսավորության մասին Խորհուրդների VI-րդ Համագումարն առանձին զեկուցումներն է լսել և տարվելիք աշխատանքի մասին միանգամայն վորոշակի գործնական ցուցմունքներ տվել։

Խորհուրդների VI Համագումարի վորոշումները իրականացվել կարող են Ադրբեջանի Հանրապետության ամբողջ աշխատավոր ազգաբնակության մասնակցությամբ և յեռանդուն աջակցությամբ. դրա համար էլ Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հանձնարարել է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին՝ Համագումարի ընդունած վորոշումների մասին աշխատավոր բնակչությանը լայնորեն տեղեկացնել։ Այդ հանձնարարությունը կատարելու համար Խորհրդային Ադրբեջանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրատարակում է Խորհուրդների VI Համագումարի վորոշումները՝ յերեք մասից բաղկացած՝

Առաջին մաս.—Խորհրդային Ադրբեջանի կառավարության զեկուցման առթիվ Համագումարի ընդունած վորոշումները։

Յերկրորդ մաս.—Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի զեկուցման առթիվ Համագումարի ընդունած վորոշումները։

Յերրորդ մաս.—Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի զեկուցման առթիվ Համագումարի ընդունած վորոշումները։

Յերեք մասն էլ հրատարակվում է թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով. այդպիսով Ադրբեջանի աշխատավորները կարող են Համագումարի վորոշումների հետ ծանոթանալ իրենց մայրենի լեզվով։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ադրբեջանի կառավարությունը զեկուցել է, թե յերկու տարվա ընթացքում ինչ աշխատանք է կատարված՝ որենսդրական և պետական վարչության, ժողովրդական տնտեսության և նրա առանձին ճյուղերի պլանավորման գործում։ Դրա հետ միասին զեկուցման մեջ լուսաբանվել են յերկու տարվա ընթացքում ձեռք առնված միջոցները և այն հետևանքները, վորոնց մենք հասել ենք՝ շնորհիվ ձեռք առնված միջոցների։

Կառավարության առաջ դրված հիմնական խնդիրը յեղել է և մնում է մեր յերկրի ինդուստրիացման իրագործումը ու գյուղական տնտեսության մեջ աշխատանքի նոր մեթոդներ մտցնելը։

Մատնանշված նպատակն իրագործելու համար կառավարությունը գոյություն ունեցող արդյունաբերական ձեռնարկները վերակառուցելու և բարելավելու և նոր արդյունաբերական ձեռնարկների շինարարության համար հսկայական գումարներ է հատկացրել։ Գյուղական տնտեսության ասպարեզում կառավարությունը հոգ է տարել հողդաստագործումը կանոնավորելու, հողաշինարարությունն անցկացնելու և վոռոգման աշխատանքները զարգացնելու համար։ Գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր տեսակների զարգացման համար կառավարությունը ձեռք է արել բոլոր միջոցները. այդ կազմակերպությունների միջոցով գյուղացիներին վարկ և անհրաժեշտ մեքենաներ, գործիքներ, գյուղական տնտեսության մեջ անհրաժեշտ զանազան նյութեղեններ է մատակարարել։

50447-

Կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձրել գյուղի կոլեկտիվացման զարգացմանը՝ կազմակերպվող կոլեկտիվներին ամեն կերպ ոգնություն ցույց տալով։ Կառավարության հարկային քաղաքականությունն ուղղված է յեղել չքավորական և միջակ տնտեսությունների զարգացման համար բավականաչափ նպաստավոր պայմանների ստեղծելուն, հարկերի ծանրությունը կուլակային տնտեսությունների վրա ձգելով։

Կառավարությունը միջոցներ է ձեռք արել գյուղին գյուղատնտեսական միջոցներով ոգնելու՝ բնակչության կուլտուրական դրությունը բարձրացնելու համար։

ՀՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ZUBIF-Арм. ССР
36062-66

Ձեռք առած այդ բոլոր միջոցներին Համագումարը հավանություն է տվել, վորն արտահայտված է հետևյալ բանաձևի մեջ.

«Լսելով ընկ. Մուսաբեկովի զեկուցումը, Խորհուրդների Ադրբեջանի VI Համագումարը լիովին և ամբողջովին հավանություն է տալիս կառավարության գործունեությանը և նրա բռնած քաղաքական գիծը համարում է ճիշտ»։

Համագումարը նշում է, վոր Ադրբեջանի կառավարությունը հսկայական հաջողություններ է ունեցել տնտեսական և կուլտուրական շինարարության և հանրապետության ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։

Համագումարը հաստատում է, վոր կառավարության ազգային ճիշտ քաղաքականության հետևանքով Ադրբեջանի բոլոր աշխատավորների մեջև ազգային համերաշխությունն ամրապնդվել է՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի ամրապնդմանը հաստատուն դրավական ծառայելով։

Ինչպես Համագումարի բանաձևի մեջն է ասված, ժողովրդական տնտեսության զարգացումն ընթացել է յերկրի ինդուստրիացման ուղղությամբ։ Արդյունաբերության ասպարեզում այդ աճումն այնքան արագությամբ է տեղի ունեցել, վոր վերջին հինգ տարվա ընթացքում արդյունաբերության ընդհանուր արտադրանքը համարյա կրկնապատկվել է։

Արդյունաբերության զարգացման ասպարիզում կառավարության աշխատանքի ամենակարևոր և պատասխանատու մասը նոր շինարարությունն է հանդիսանում, վորի վրա ամեն տարի հսկայական գումարներ է ծախսվում։ Խորհրդային Ադրբեջանի Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին յենթակա ձեռնարկությունների վերակառուցման և նոր շինարարության համար արված փաստական ծախսերը կազմել են՝ 1926—27 թվին —8 միլ. 622 հազ. 320 ռուբ. և 1928—29 թվին—10 միլլիոն 633 հազար 337 ռուբլի։ Բացի դրանից Բագվի Խորհուրդը արդյունաբերության համար ծախսել է յերկու տարվա ընթացքում 481 հազար ռուբլի և գավառական տեղական արդյունաբերության համար—մի միլլիոն 319 հազար ռուբլի։ Յեթե վերցնենք միայն 1927—28 թվը և Ադրբեջանի ամբողջ արդյունաբերության համար ծախսված միջոցները հաշվենք, ապա այդ կհասնի մի հսկայական գումարի—130 միլիոն ռուբլու, վորից 117 միլիոն 500 հազարն ընկնում է նավթային արդյունաբերության վրա։

Միաժամանակ աճել է աշխատանքի արտադրողականությունը, շատացել է արտադրած ապրանքը և ինքնարժեքն աստիճանաբար իջել:

Մատնանշված նվաճումների հետ միաժամանակ Համագումարը ուշադրություն է դարձրել և այն թերությունների վրա, որոնք նկատվել են հիմնական շինարարության մեջ: Իսկ այդ թերություններն էլ գլխավորապես անտնտեսությունը, շինարարության խստորեն ծրագրված չլինելը, բավականաչափ մշակված և հիմնավորված նախագծերի բացակայությունն է և այլն: Շնորհիվ վերոհիշյալ յերևույթների սկզբում նախատեսված գումարից ծախսերն ավելացել են, որը և խանգարել է ֆինանսական ծրագրի կատարումը: Մատնանշված թերությունների համար աննշան պատճառ չի յեղել նաև բարձր վորակավորյալ մասնագետների չափազանց քիչ լինելը:

Աղբրեջանի ելեկտրոֆիկացիայի ասպարեզում աշխատանքները տարվել են յերեք ուղղությամբ.

1) Հետախուզությունների և նախագծումների,
2) Հիդրոկայաններ կառուցելու, և
3) Ելեքտրո-մոնտաժային աշխատանքների:

Անցած յերկու տարվա ընթացքում հետախուզություններ են կատարված Խորհրդային Աղբրեջանի այն գետերի վրա, որոնք կարող են ոգտագործվել հիդրոկայաններ կառուցելու համար: Նույն ժամանակամիջոցում ուժեղ կենտրոնական հիդրոցենտրալի յերկու նախագիծ է կազմված (Կարա-Սախկալի և Թարթառի):

Խորհրդային Միության կառավարության կողմից Կարա-Սախկալի 39 հազար ձիու ուժ ունեցող հիդրոկայանի հավանություն ստացած նախագիծը հնգամյակի վերջին պիտի կառուցված վերջացած լինի: Հաշվետու ժամանակամիջոցում 5200 ձիու ուժ ունեցող չորս հիդրոկայանների կառուցումն ավարտվել է, դրանից Ներքին-Զուռնաբադի հիդրոկայանը 3750 ձիու ուժ ունի: Գյուղական եժանագին ելեքտրոկայանների համար էլ հետախուզություններ ու նախագծեր կազմելու աշխատանքներ են տարվում: Ելեքտրոմոնտաժային աշխատանքների ասպարիզում պետք է նշել Գյանջա քաղաքի մանածագործարանի և ժահուդի գործարանի ելեքտրական սարքավորումը:

Հիշված բոլոր աշխատանքներն ու նվաճումները Խորհուրդների VI Համագումարի կողմից նշվել են հետևյալ ձևով.

«Արդյունաբերական շինարարության համար խոշոր ծախսեր անելով, որը նախորդ յերեք տարիների ընթացքում 25

միլիոն ռուբլու է հասել և այս ընթացիկ 1928—29 տարում էլ 10 միլիոնից էլ ավելի է, արդյունաբերության զարգացման գործում նշանակալից հաջողություններ են ձեռք բերված»:

Հին ձեռնարկությունները լայնացնելու, արտադրությունը ռացիոնալիզացիայի յենթարկելու, գործող սարքավորումն ուժեղ բեռնավորելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար ձեռք առնված միջոցների շնորհիվ՝ հաջողվել է հանրապետական արդյունաբերության արտադրանքը բավական մեծացնել՝ որը 1926—26 թվին յեղել է 26 միլիոն ռուբլի իսկ 1927—28 թվին հասել է մինչև 45 միլիոն ռուբլու (70%-ից ավելի է մեծացել) և 1928—29 թվին նոր նշանակալից աճումն է տալու: Դրա հետ միասին արտադրանքի ինքնարժեքն իջել է:

Մատնանշված նվաճումների հետ Համագումարը միաժամանակ հաստատում է, որ առանձին դեպքերում արդյունաբերական շինարարական նախահաշիվներից ավելի են ծախսվել, շինարարության մեջ բավականաչափ պլանայնություն չի յեղել, շինարարական նախահաշիվներից ավելի են ծախսվել, տեխնիկական նախագծերը բավականաչափ չեն մշակվել, պահանջվող չափով տնտեսական հիմնավորումները բացակայել են և շինարարությունը թանկ է նստել:

Հիմնական ծախսերի ասպարիզում նշված թերությունները, գոյություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցումն ու բարելավումը պահանջում են ձեռք առնել ամենավճռական միջոցներ վերացնելու այն:

Մենք պետք է խոստովանվենք նույնպես, որ աշխատանքային դիսցիպլինան մեր ձեռնարկություններում իր կոչման բարձրության վրա կանգնած չի յեղել: Անփութությունը, անտարբեր վերաբերմունքը և պրոգուլները դեռ չենք վերացրել:

Աշխատանքային դիսցիպլինան բարձրացնելու գործը բոլոր աշխատավորների գործն է հանդիսանում: Անհրաժեշտ է, որ բոլոր բանվորները պրոֆմիութենական կազմակերպությունների ղեկավարությամբ սոցիալիստական մրցություն կազմակերպեն և իրենց աշխատանքի արտադրականությունն ամենամեծ բարձրությանը հասցնեն: Ցեվ ահա հաշվի առնելով բոլոր այդ հանգամանքները Խորհուրդների Համագումարը վորոշել է՝

«Համագումարը կառավարությանը հանձնարարում է միջոցներ ձեռք առնել շեշտված թերությունները վերացնելու և հատկապես ձեռնարկներում աշխատանքային դիսցիպլինան բարձրացնելու և 1928—29 տարում 1927—28 թվի համեմատությամբ արտադրանքի ինքնարժեքը 7%-ով իջեցնելու մասին յե-

ղած դիրեկտիվներն անշեղ կերպով կյանքի մեջ անցկացնելու»:

Ադրբեջանի արդյունաբերության հիմնական տեսակներն են՝ մանածայինը (հաշված և մետաքսայինը), նավթայինը, ձկնայինը:

Հում նյութի պաշարը մեզ մոտ բավականաչափ նպաստավոր պայմաններում է գտնվում. բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների հետագա զարգացումը կախված կլինի միայն արդյունաբերության մեջ դրված հիմնական ծախսերի չափերից: Մինչև այժմ արդյունաբերությունը զարգացել է այն վայրերում, որտեղ առաջուց յեղել են արդյունաբերական ձեռնարկություններ, այսինքն Բաքու քաղաքում և մասամբ Նուխում: Խորհրդ. կառավարության տնտեսական գործունեության հետևանքով, մատնանշված քաղաքների արդյունաբերությունը զարգացել և ամրապնդվել է: Բացի դրանից մեզ մոտ արդյունաբերական նոր քաղաքներ են հանդես յեկել, ինչպես Գյանջան, որը շուտով Ադրբեջանի արդյունաբերական յերկրորդ կենտրոնը կդառնա, և ամբողջ մի շարք ուրիշ վայրեր, որտեղ ապագա արդյունաբերական ոջախներ են սկզբնավորվում:

Վերջին տարիներս մեր լեռնային հարստությունների գիտական ուսումնասիրությունները, ինչպես նաև հում նյութի տարեց-տարի աճող պաշարները (բամբակի, սետաքսի և ուրիշ տեխնիկական մշակույթներ) կառավարությանը լիակատար հիմք է տալիս մտածելու Ադրբեջանի ինդուստրացման համար, որն իրենից մինչև այժմ եկ գյուղատնտեսական յերկիր է ներկայացնում: Կառավարության հետագա աշխատանքի ընթացքում հատուկ ուշադրության պիտի արժանանա Դաշքեսանի յերկաթահանքերը և նրանց մշակելն իրականացվի:

Ներկայումս կառավարությունը մեծ գումարներ է ծախսում նախագծեր կազմելու և հետախուզական աշխատանքների համար. այդ աշխատանքները կատարելու համար հրավիրված են մեր Խորհրդային Հանրապետությունների Միության ամենալավ մասնագետները:

Արդյունաբերության համար անելիք հիմնական ծախսերի հեռանկարները, Խորհուրդների Համագումարը քննության առնելով, մատնանշել է.—

«Հիմնական ծախսերի նկատմամբ,—Համագումարը, ընդգծելով յերկրի ինդուստրացման թափը չթուլացնելու և նոր արդյունաբերական ոջախներ ստեղծելու անհրաժեշտությունը,—հանձնարարում է կառավարության մանածագործային և ձկնային արդյունաբերության հետ միասին հիմնական ծախսեր անել

առաջին հերթին արդյունաբերության, լեռնային, լեռնա-քիմիական և մետաղաձուլական ճյուղերի զարգացման համար»:

«Համագումարն առանձնապես անհրաժեշտ է համարում Դաշքեսանի շինարարությունն արագացնելը, որը պետք է վոչ միայն Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ինդուստրացման գործում հզոր լծակ դառնա, այլ և ամբողջ Անդրկովկասի»:

Ինչպես արդյունաբերությունը, այնպես և գյուղատնտեսության առանձին ճյուղերը հաջողությամբ զարգացնելու համար մեզ վոչ միայն հում նյութ է անհրաժեշտ, այլ և ելեքտրական ուժ, որի միջոցով կարելի կլինի շարժման մեջ դնելու մեր նախագծված ֆաբրիկաներն ու գործարանները:

Մեր գետերը կարող են մեզ այնքան «սպիտակ ածուխ» տալ, որը ոգտագործելով այն հիդրո-ելեքտրո-կայանների շինարարության միջոցով, կարելի կլինի ուժային տնտեսության համար վառելիքից միանգամայն հրաժարվել: Վերև արդեն մատնանշվել են այն աշխատանքները, որ կատարվել է Ադրբեջանում ելեքտրոկայաններ նախագծելու և կառուցելու առաջարկում: Սակայն Համագումարը գտել է, որ՝

«Խոշորագույն ուժային հնարավորություններ ունենալով, այնուամենայնիվ ելեքտրոշինարարությունն Ադրբեջանում Խորհուրդների վերջին Համագումարից դեռը յետ է մնում արդյունաբերության հիմնական շինարարության ծավալման թափից:

Այդ պատճառով Համագումարը հանձնարարում է կառավարության՝ Ադրբեջանի ելեկտրոֆիկացիայի աշխատանքներն ուժեղացնել և ռայոնական ուժեղ հիդրո-կայանի (Կարա-Սախկալ) կառուցումն արագացնել»:

Այդ վորոշումը կատարելու համար Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը մշակել է Կարա-Սախկալի 30 հազար ձիու ուժ ունեցող հիդրո-ելեկտրոկայանի նախնական նախագիծը, որը պետք է Գյանջայի, մեր յերկրորդ արդյունաբերական կենտրոնի ամբողջ ռայոնին ելեկտրական եներգիա տա:

Խորհուրդների համագումարն ուշադրություն է դարձրել նաև Ադրբեջանի տեղական և տնայնագործական (կուստար) արդյունաբերությանը: Վորպեսզի ընթերցողին հասկանալի լինի, թե ինչի մասին է խոսքը, պետք է մատնանշենք, որ բացի պետական արդյունաբերությունից, որը միացրված է տրեստների մեջ, կան մի շարք արդյունաբերական մանր ձեռնարկու-

թյուններ, վորոնք գտնվում են Գավառական Գործադիր Կոմիտեների իրավունքի տակ։ Ահա Գավառական Գործադիր Կոմիտեների ձեռքին գտնվող արդյունաբերական այդ մանր ձեռնարկություններն ել կոչվում են տեղական նշանակության ձեռնարկություններ, կարճ ձևով՝ տեղական արդյունաբերություն։

Մինչև 1926—27 թիվը տեղական արդյունաբերության կազմի մեջ (բացի Բագխորհրդից) 18 ձեռնարկություններ են հաշվում՝ 220 հազար ռուբլի հիմնական դրամագլխով։ Ադրբեջանի տեղական արդյունաբերությունը հազիվ հաղ է իր գոյությունը պահպանել, վորովհետև նրա բոլոր միջոցները կլանել են Գավառական Գործադիր Կոմիտեների բյուջեները։ Վորպեսզի տեղական արդյունաբերությունը պատշաճ բարձրության հասցնվի, նրա հսկողությունը, ինչպես նաև պլանավորումն ու կանոնավորումը հանձնվել է Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին։ Տեղական արդյունաբերության գործունեությունն ուղղվել է դեպի տեղական հում նյութ ոգտագործելը. դրա համար ել գլխավորապես ուշադրություն է դարձվել կոնսերվներ պատրաստելուն (մրգեղեն և բանջարեղեններ), այգեգործության մթերքներն ոգտագործելուն՝ նրանցից սպիրտ քաշելով, և շինանյութերի (աղյուս, կիր և այլն) արտադրության։ Տեղական արդյունաբերության մեջ հիմնական ներդրումները (ծախսերը) յեղել են՝ 1926—27 թվին—585 հազար ռուբլի, 1927—28 թվին—734 հազար 400 ռուբլի և այս ընթացիկ տարում—796 հազար ռուբլի։ Ինչպես տեսնում եք տեղական արդյունաբերությունը զարգացնելու համար կառավարության կողմից տարեցտարի ավելի ու ավելի միջոցներ են բաց թողնվում։ Հնգամյակի ընթացքում կառավարությունը յենթադրում է ծախսել համարյա թե 5 միլիոն ռուբլի։

Բագվի Խորհրդի տեղական արդյունաբերությունը գավառական տեղական արդյունաբերությունից նշանակալից չափով խոշոր է։ Տեղական չորս տրեստները 1926—27 թվին 5 միլիոն 279 հազար ռուբլու ընդհանուր արտադրանք են ունեցել, վորը 1927—28 թվին մեծացել է համարյա 50%-ով և հասել 7 միլիոն 909 հազար ռուբլու։

Այս ընթացիկ տարում ել յենթադրվում է այդ արտադրանքը կրկնապատկել։

Ադրբեջանի տնայնագործական (կուստար) արդյունաբերության մեջ զբաղված են 38 հազար տնայնագործներ, վորոնք մոտավորապես 40 միլիոն ռուբլու զանազան տեսակի ապրանքներ

են արտադրում։ Այդ բոլոր տնայնագործների մոտ քառորդ մասը տնայնագործական կոոպերատիվների մեջ են միացված, ըստ վորում ամբողջ արտադրանքի կեսը (20 միլիոն ռուբլի) արդեն միացած տնայնագործներն են տալիս։

Տնայնագործական կոոպերացիայի աշխատանքները կանոնավոր կազմակերպելու համար, տնայնագործները կառավարության աջակցությամբ կազմակերպել են իրենց Հանրապետական Միությունը—«Ազսեներբիրլիգի»-ն։

Վորովհետև տեղական և տնայնագործական արդյունաբերությունն ոգտագործում է հենց տեղական հում նյութը, և այդպիսով իր զարգացման համար մեծ հնարավորություններ ունի, Խորհուրդների Համագումարը նրանց զարգացման նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտել է հետևյալ բանաձևի մեջ.

«Համագումարը կառավարության ուշադրությունն է հրավիրում ամեն տեսակի միջոցներով նպաստելու տեղական և տնայնագործական արդյունաբերության զարգացմանը, վորը հենված է գլխավորապես տեղական հում նյութի վրա»։

Համագումարն առանձնապես իր ուշադրությունը կենտրոնացրել է նավթային արդյունաբերության դրության վրա, վորը կարևոր է վոչ միայն Ադրբեջանի համար, այլև ամբողջ Խորհրդային Հանրապետությունների Միության համար։ Խորհրդային իշխանությունը նավթարդյունաբերությունը քայքայված, բաժան-բաժան յեղած վիճակում է գտել՝ քաղաքացիական պատերազմի տարիներին։ Աշխատավորների ընդհանուր ջանքերով հաջողվել է նավթային արդյունաբերությունը միացնելու և նոր տեխնիկական հիմքերի վրա զարգացնելու համար հսկայական աշխատանք կատարել։ Շնորհիվ նրան անցյալ տարի նավթ է հանվել արդեն մինչպատերազմյան չափից 30%-ով ավելի, իսկ գազ է ստացվել 7 անգամ ավելի։ Նավթահանության աճելու հետ նավթի ինքնարժեքն ել իջել է. 1924—25 թվին նավթի մի տոննը (61 փութ) 17 ռուբլի 20 կոպեկ ել նստում, անցյալ տարի իջել է մինչև 16 ռուբլի 30 կոպեկի, իսկ յեթե վերցնենք միայն տեխնիկական գործողությունների արժեքը (առանց նավթի և բաժին կազմող հատկացումների), ապա ինքնարժեքը 9 ռուբլի 10 կոպեկից իջել է մինչև 4 ռուբլի 20 կոպեկը, այսինքն ավելի քան յերկու անգամ։ Այդ նվաճումներն ուժեղացրված հորափորության և շատրվանային (ֆոնտանի) նավթ ստանալու հետևանք են։ Նավթի վերամշակությունը ևս մեծացել է (1927—28 թվին 32%-ով) շնորհիվ նոր նավթաթոր գործարանների կառուցելուն և հների վերասարքավորման։ Վերոհիշյալ նը-

վաճառների և տեղում նավթի գործածությունը վառելիքի համար մեծապես տնտեսելու շնորհիվ, կառավարությունը հնարավորություն է ունեցել նավթի արտասահման արտահանելու գործը լայնացնել, և այժմ մեր արտահանությունը մինչպատերազմյան չափից յերեք անգամ ավելացել է։ Մեր նավթը արտասահմանում ծախելով՝ մենք այնտեղ նոր ֆաբրիկաների և գործարանների համար զանազան մեքենաներ և սարքավորումներ ենք առնում և հենց դրանով էլ ինդուստրացման միջոցով սոցիալիզմի շինարարությունն ենք իրականացնում։ Արտահանության գործառնությունները հեշտացնելու և Անդրկովկասյան յերկաթուղին ծանրաբեռնումից թեթևացնելու համար, ձեռնարկված է Բաքու—Բաթում հսկայական նավթանցքի կառուցմանը, որը կավարտվի 1930 թվի կեսերին։ Բոլոր այս նվաճումները Խորհուրդների Համագումարը նշել է յուր հետևյալ բանաձևի մեջ։

«Նավթի արդյունաբերության մեջ նվաճումները յերևվում են նավթ հանելու գործում մինչպատերազմյան չափից անցնելուց, հորատորության չափն ուժեղացնելուց, նավթի ինքնարժեքի իջեցումից։ Շնորհիվ լայն չափով նոր գործարանային շինարարության, հին գործարանների հիմնական վերանորոգության և ռացիոնալիզացիայի՝ նավթի վերամշակությունը նշանակալից չափով աճել է և նավթամթերքների արտահանությունը մեծացել. սըրան հատկապես պիտի նպաստի նավթանցքը (Բաքու—Բաթում), որի կառուցումը հաջողությամբ առաջ է գնում»։

Արդյունաբերության լայնանալու և ամրապնդվելու հետ միաժամանակ աճել է և արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը և լավացել է նրանց դրությունը։ 1926—27 թվին Ադրբեջանի բանվորների և ծառայողների թիվը կազմում եր 186 հազար, իսկ 1927—28 թվին—195 հազար։ Այդպիսով աճումը 4,7% է կազմում։ Այդպիսի աննշան աճումը բացատրվում է արդյունաբերության մեջ անցկացրած ռացիոնալիզացիայով։ Յեթե ընդհանուր թվից հանենք Խորհրդային Ադրբեջանի Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին յենթակա արդյունաբերության աշխատակիցներին, ապա պատկերը մի քիչ փոխվում է և այդ զրուպպայի բանվորական ուժի աճումը արտահայտվում է համարյա 20%-ով։ Արդյունաբերության համարյա բոլոր ճյուղերում աշխատանքի արտադրականությունն աճել է։ Որինակի համար կարելի է ցույց տալ, որ նավթի արդյունաբերության մեջ մշակումը յուրաքանչյուր բանվորի վրա հաշված բարձրացել է՝ նավթահանության գործում 23%-ով, իսկ վերամշակման գործում 18%-ով։ Արդյունաբերական բանվորների միջին աշխատավարձը աճել է 10%-ով. իսկ յեթե հաշվի առնենք և այն, որ աշխատավարձի աճման հետ միաժամանակ սննդամթերքների գները որոշ չափով բարձրացել են, ապա աշխատավարձի իրական բարձրացումը պետք է մոտ 6% հաշվել։ Աշխատանքի պաշտպանության և բանվորների կյանքի պայմանները բարելավելու ասպարիզում ևս կառավարությունը շատ բան է արել։ Ուժեղ կերպով զարկ է տրվել բնակարանային շինարարությանը, որի վրա Խորհրդային Ադրբեջանի բոլոր կազմակերպությունների կողմից միլիոններ են ծախսվում։ Միութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հոբելենական պլենումի որոշմանը հետևելով, Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը տնտեսական կազմակերպությունների հետ միասին մի շարք ձեռնարկությունների յոթժամյա բանվորական որվա անցկացնելն է իրականացրել։ Բարելավվել է նաև բանվորների կուլտուրական կարիքների բավարարման գործը, դպրոցների թիվն ավելացել է, բժշկական ոգնությունը լայնացել է և այլն։ Այս բոլորը զեկուցվել է Խորհուրդների Համագումարին, որն իր բանաձևի մեջ մատնանշել է.—

«Համագումարը մատնանշելով Խորհրդային Ադրբեջանի արդյունաբերության մեջ բանվորական ուժի նկատելի աճումը, մասնավորապես արտադրության մեջ, տեղական բնակչությանն ավելի ու ավելի ներգրավելը, աշխատավարձի անշեղ աճումը, աշխատանքի պայմաններն ու բանվոր դասակարգի կենցաղի բարելավումը, բանվորական բնակարանային շինարարության զարգացումը և հաջողությունը, մեծ քանակությամբ ձեռնարկություններում յոթժամյա բանվորական որ մտցնելը,—հանձնարարում է կառավարությանն անշեղ կերպով արդյունաբերության աճման հետ միասին լավացնել և բանվոր դասակարգի լայն մասսաների աշխատանքի և կենցաղի պայմանները»։

Նախ քան գյուղական տնտեսության ասպարիզում ձեռք առնված միջոցների մասին կառավարության տված զեկուցման առթիվ Խորհուրդների Համագումարի վորոշումների բացատրությանն անցնելը, պետք է հիշեցնենք ընթերցողներին, որ Խորհուրդների Համագումարը գյուղական տնտեսության զարգացման հսկայական նշանակություն տալով, լսել է Հողագործության Ժողովրդական Կոմիսսարիատի հատուկ զեկուցումը։ Համագումարի վորոշումները բացատրված են գրքույկիս յերկրորդ մասում։ Դրա համար էլ այստեղ կսահմանափակվենք գյուղական տնտեսության մասին ամենահամառոտ տեղեկություններով։

Խորհրդային Ադրբեջանում ցանքային տարածության ընդ-

հանուր քանակը դեռ 1925 թվին մինչպատերազմյան չափին էր հասել։ Այսպես՝ 1914 թվի ցանքսային տարածությունը 100% ընդունելով, մենք 1926 թվին ունենք 106% և 1928 թվին՝ 107% մինչպատերազմյան տարածության։ Բացարձակ թվերով 1928 թվի ցանքսային տարածությունը մի միլիոն 40 հազար հեկտար է լեղել՝ 1914 թվի 965 հազար հեկտարի դիմաց։ Հացահատիկային մշակույթները 1914 թվին ընդհանուր տարածության 81%-են կազմել, իսկ 1928 թվին—89,7%-ը. տեխնիկական մշակույթները 1914 թվին—12,5%, իսկ 1928 թվին—12,1%։ Տեխնիկական մշակույթների մեջ գլխավոր դերը պատկանում է բամբակացանքսին, որը 1914 թվին բռնել է ամբողջ ցանքսային տարածության 12%-ը, իսկ 1928 թվին—12,3%, 1914 թվի համեմատությամբ մեծանալով բացարձակ թվերով 3000 հեկտարով։ 1929 թվի բամբակի ցանքսերի տարածությունը մեծացնելու մասին կառավարության ընդունած վորոշումը տեխնիկական մշակույթների հարաբերությունն էլ ավելի նպաստավոր կըդարձնի։

Բերած թվերը պարզապես խոսում են այն մասին, որ գյուղացիական տնտեսությունը շնորհիվ կառավարության քաղաքականության, տեխնիկական և ինտենսիվ մշակույթները զարգացնելու ուղին է բռնել։

Այդ ժամանակամիջոցում նշանակալից չափով հանրապետության մեջ մեծացել է և անասունների քանակը։ 1928 թվի տվյալներով անասունների ընդհանուր քանակը մինչպատերազմյան չափից բավականաչափ անցել է։

Նկատելի աճում է լեղել նաև շերմապահության մեջ։ Այսպես՝ մեր շերամի սերմաբուծարաններում շերամի սերմի (գրենա) քանակը, որ 1926 թվին լեղել է 47 հազար տուփ, 1928 թվին հասել է 100 հազար տուփի, իսկ թաց բոժոժի բերքը, որ 1926 թվին հազար 722 տոննն է լեղե, 1928 թվին հասել է 2 հազար 620 տոննի։

Գյուղական տնտեսության ընդհանուր արտադրանքի արժեքը չերվոնեցի ռուբլիներով հաշված լեղել է՝ 1924—25 թվին 164 միլիոն 764 հազար ռուբլի, իսկ 1927—28 թվին արդեն 196 միլիոն 632 հազար ռուբլի—մոտավորապես 20%-ով ավելի։ Գյուղական տնտեսության ընդհանուր արտադրանքի հետ միասին աճել է և նրա ապրանքային մասը, այսինքն այն, որը շուկա է հանվում և վոչ թե գյուղացիությունն է սպառում։ 1924—25 թվին ընդհանուր արտադրանքի ապրանքային մասը կազմել է 31%-ը, իսկ 1928 թվին հասել է 34,6%-ի։

Վերջին յերկու տարվա հողաշինարարական աշխատանքներով կազմակերպված է 431 հողային հասարակության 428 հա-

զար 978 հեկտար տարածությամբ, չափված են 160 հազար 543 առանձին հողամասեր, 198 հազար 684 հեկտար տարածություն ունեցող 184 հողային հասարակության միջգյուղային և ներքին գյուղային հավասարացումը վերջացրված է, ինչպես նաև հողաշինարարված են 131 կոլխոզներ և մեքենայական ընկերություններ։

Ջրային տնտեսության ասպարիզում կատարված է հետևյալը.—

1) Մաքրված և վերանորոգված են 13 հազար 490 կիլոմետր յերկարությամբ առուներ, 2) Նոր առուներ են փորված—91 կիլոմետր, 3) Դրված են 83 ջրբաժաններ, 4) Վերանորոգված են 371 ամբարտակային (դահնա) սարքավորումներ և 117 ջրամբարներ, 5) 1925 թվից մինչև 1928 թ. վերոհիշյալ բոլոր աշխատանքների հետևանքով ջրովի հողերի տարածությունը 69 հազար 630 հեկտարով ավելացել է, վորոնցից ինժեներական սիստեմով սարքված—19 հազար 850 հեկտար, քյահրիզներով—18 հազար 590 հեկտար և ջրհաններով—31 հազար 190 հեկտար։

Կառավարությունն ոգնություն է հասցրել գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ կազմակերպված գյուղացիությանը՝ նրանց կարճատև և յերկարատև վարկ բաց թողնելով։ Վերջին յերկու տարվա ընթացքում գյուղում վորպես վարկ բաց է թողնված 12 միլիոն 957 հազար ռուբլի, վորից մի տարով՝ (կարճատև) 6 միլիոն 690 հազար ռուբլի և 1 տարուց մինչև 5 տարի ժամանակով (յերկարատև)—6 միլիոն 297 հազար ռուբլի, ըստ վորում 1926 թվի համեմատությամբ 1927—28 թվին յերկարատև վարկերի բաժինն ավելի քան յերեք անգամ մեծացել է (1 միլիոն 488 հազար և 4 միլիոն 779 հազ. ռ.)։

Վարկային միջոցների 53,8 տոկոսը տրվել է գյուղացիական տնտեսությունների արտադրական միջոցները շատացնելու համար։

1926 թվի հոկտեմբերի 1-ին լեղել է 233 գյուղատնտեսական կոոպերատիվ 57 հազար 451 անդամով։ 1927 թվի հոկտեմբերի 1-ին՝ 317 կոոպերատիվ 98 հազար 849 անդամով և 1929 թվի հունվարի 1-ին 262 կոոպերատիվ 155 հազար 336 անդամով։ 1929 թվի հունվարի 1-ին կոոպերատիվների քանակության քչանալը բացատրվում է նրանով, որ 77 միավորներ կոլխոզներ են դարձված։

Բերված թվերը ցույց են տալիս, որ գյուղացիական բոլոր տնտեսությունների վոչ պակաս քան 30%-ը մտնում է գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ։ Գյուղատնտեսական կոոպե-

բացիայի սոցիալական կազմը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1) Սակավակարող տնտեսությունները բոլոր անդամների 26,6% են կազմում,

2) Միջակները—68% են կազմում,

3) Ուժեղ տնտեսությունները—5,4%-ը։

Բերված տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական կոոպերացիան ճնշող մեծամասնությամբ իր մեջ միացնում է գյուղի չքավորական և միջակ տարրերին։ Չքավորներին կոոպերացիայի մեջ մտցնելու համար ստեղծվել է հատուկ չքավորական ֆոնդ, որի հաշվին կոոպերացման են յենթարկվել 18 հազար տնտեսություններ։ Կոոպերացիայի հատուկ տեսակներն երենց շարքերում հաշվում են 53 հազար 100 անդամ կամ կոոպերացման յենթարկված տնտեսությունների ընդհանուր թվի 1/3-ը։

Գյուղատնտեսական կոոպերացիայի շրջանառությունները 1927—28 թվին հասել են 41 միլլիոն 716 հազար ռուբլու։

Վերջին կետը, որին պիտի ուշադրություն դարձնենք—դա կոլլեկտիվ տնտեսությունների զարգացումն է։ Խորհրդային Ադրբեջանի գյուղական տնտեսության վերելքը կախված է ոչ միայն առանձին տնտեսությունների մեջ տեխնիկան զարգանալուց, այլ և մեր գյուղացիական մանր տնտեսությունները կոլլեկտիվ միացումների մեջ ամրապնդվելուց. կոլլեկտիվների մեջ կարող են գործադրվել առանձին, մանր տնտեսություններին անմատչելի տեխնիկական վերջին նվաճումները։ Ներկայումս մեզ մոտ, Խորհրդային Ադրբեջանում, ունենք 80% այդպիսի մանր տնտեսություններ, որոնցից ամեն մեկի ընդհանուր յեկամուտը տարեկան 400 ռուբլուց չի ավելանում։

Այդ տնտեսություններին արտադրության միջոցներ մատակարարելը հսկայական միջոցներ կպահանջեր։ Սակայն յեթե մենք հնարավորություն ել ունենայինք այդ հսկայական գումարները ծախսելու, այդ ծախսերն արդյունավետ չեն լինի, որովհետև մանր տնտեսությունները չեն կարող լիովին ոգտագործել այն մեքենաները, որ կարելի է գործածել գյուղական տնտեսության մեջ։

Այդ տնտեսությունների ուժը բարձրացնելու միակ ուղին նրանց կոլլեկտիվացնելն է։ Կոլլեկտիվացման գաղափարը սկսել է աստիճանաբար մուտք գործել գյուղացիական տնտեսությունների լայն խավերի մեջ և 1928 թվի վերջին մենք արդեն ունեցել ենք 287 կոլլեկտիվ միացումներ (5 հազար 592 տնտեսություն-

ներ), որոնք երենց տրամադրության տակ 40 հազար 640 հեկտար հող ունեն։ Կոլխոզների կարիքները բավարարելու համար ստեղծված է կոլլեկտիվ միացումների հանրապետական միություն—«Կոլխոզցենտր»-ը։ Կոլխոզների սոցիալական կազմը մինչև հաշվով հետևյալն է. չքավորներ, բատրակներ և սակավակարող միջակներ 80%, միջակներ—20%։ Կոլխոզներին վերջին յերկու տարվա ընթացքում ցույց տրված վարկային ոգնությունը հասնում է 836 հազար ռուբլու։

Այս ամենի մասին Խորհուրդների Համագումարը հետևյալ բանաձևն է ընդունել.

«Գյուղական տնտեսության նկատմամբ Համագումարը հաստատում է, որ գյուղական տնտեսության աճման թափը յերկրի ինդուստրիալիզացիայի շահերին չի համապատասխանում՝ մեծ չափով յետ մնալով մեր արդյունաբերության աճման թափից»։

«Այնուամենայնիվ վերջին տարիների ընթացքում Ադրբեջանի գյուղական տնտեսության մեջ նկատվում է որոշակի վերելք. ցանքսերի տարածությունն աճել է, ընդհանուր արտադրանքն ավելացել և նրա ապրանքային մասը մեծացել, գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելն ուժեղացել է, գյուղատնտեսական կոոպերացիան ամրապնդվել և զարգացել է, ցանքսերի պայմանագրության սիստեմը լայնացել և գյուղական տնտեսությունը կոլլեկտիվացման է յենթարկվել»։

«Համագումարը հիմնական խնդիր դնելով գյուղական տնտեսության զարգացման թափի արագացնելը՝ հանձնարարում է կառավարության, գյուղացիական անհատական տնտեսությունները բարձրացնելու հետ միաժամանակ բոլոր միջոցները ձեռք առնել գյուղացիական տնտեսությունների կոլլեկտիվացումն ուժեղացնելու, որպես գյուղական տնտեսության վերելքի և գյուղացիական տնտեսություններին վարկեր, մեքենաներ, ագրոնոմիական ոգնություն ցույց տալու միակ ճիշտ ուղին. բերքատվությունը բարձրացնելուն ոգնել ագրիկուլտուրական և այլ միջոցառումների իրականացնելն ապահովել, ինչպես նաև միջոցներ ձեռք առնել հանրապետության ջրային տնտեսությունը կանոնավորելու և կարգի բերելու համար»։

«Դրանց հետ միաժամանակ Համագումարը հանձնարարում է կառավարության նշանակած ժամանակ ավարտել հողաշինարարական բոլոր աշխատանքները և առաջին հերթին կոլլեկտիվ տնտեսություններինը, ինչպես նաև գյուղատնտեսական վարկի չափը մեծացնել, վարկերը բաժանելիս դասակարգային խիստ գիծ պաշտպանել, գյուղատնտեսական կոոպերացիայի շինարարու-

36062-66
ЛЕНИНГРАДСКОЕ ОТДЕЛЕНИЕ ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՀՍՍՀ ԳԱ գրադարան
ՀՍՍՀ-Արմ ССР Ա. ԳԱ Ա. Մասիսյանի անվան

թյունն ուժեղ թափով շարունակել, ուշադրություն դարձնելով նրա նյութական դրության ամրապնդելուն»:

«Ի նկատի առնելով Ադրբեջանում բամբակաբուծության, շերմապահության և այլ տեխնիկական մշակույթների զարգացման հատուկ կարևորությունը, վորոնք հում նյութ են տալիս վոչ միայն տեղական, հանրապետական, այլ և միութենական արդյունաբերությանը,—հանձնարարել կառավարության՝ հանրապետության մեջ այդ մշակույթների արագ զարգացմանը նպաստող մի շարք ձեռք առնելիք միջոցներ մշակել»:

Խորհուրդների Համագումարի վերև բերված վորոշումը պարզորեն մատնանշում է կառավարության ձեռք առնելիք այն միջոցները, վորոնք պետք է իրականացվեն գյուղական տնտեսությունը զարգացնելու նպատակով և վորոնք հիմնականում հետևյալներն են.

1) Անհրաժեշտ է գյուղական տնտեսության զարգացման թափն այնքան արագացնել, վոր զարգացող արդյունաբերությունը հում նյութի պակասություն չզգա:

2) Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տեխնիկական մշակույթների զարգացմանը, այսինքն այնպիսի մշակույթների, վորոնք արդյունաբերության մեջ գործադրվում են (բամբակ, բոժոժ և այլն):

3) Անհրաժեշտ է ամեն կերպ գյուղական տնտեսությանն աջակցություն ցույց տալ, մատակարարելով նրան մեքենաներ, գիտական ոգնություն և վարկեր: Հատկապես պետք է հոգ տանել առանձին գյուղական տնտեսություններին կոլխոզների մեջ մտցնելու համար, վորովհետև այդ դեպքում զարգացումը կընթանա ավելի արագ թափով:

4) Գյուղական տնտեսության ասպարիզում ձեռք առնելիք զանազան միջոցներն իրագործելիս անհրաժեշտ է ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել չքավորական և միջակ տնտեսություններին ոգնելու վրա:

5) Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի գյուղացիական արտերին ջրի մատակարարումը կանոնավորվի և մատակարարվող ջուրն էլ ավելի նպատակահարմար ձևով ոգտագործվի, պետության համար ավելի անհրաժեշտ մթերքներ (բամբակ) ստացվեն:

Հաղորդակցության ճանապարհների և ճանապարհների շինարարության մասին Խորհրդային Ադրբեջանի կառավարությունն իրագործման մեջ լուսաբանել է Անդրկովկասյան և Բաքու—Զուլֆա յերկաթուղիների աշխատանքը, ինչպես նաև

խճուղիների և չխճված ճանապարհների շինարարության ասպարիզում արածը: Խորհուրդների Համագումարն իր ուշադրությունը կենտրոնացրել է խճուղիների և չխճված ճանապարհների շինարարության և Բաքու—Զուլֆա յերկաթուղու կառուցումն ավարտելու վրա:

Ադրբեջանում ընդամենը 266 ճանապարհ կա 9 հազար 545 կիլոմետր տարածությամբ, վորից 6 հազար 479 կիլոմետրը զուտ տեղական նշանակություն ունեցող ճանապարհներ են: Մատնանշված խճուղիների պահպանության, նորոգման և կառուցման համար բաց են թողնվել հետևյալ գումարները. 1926—27 թվին —մի միլիոն 522 հազար ռուբլի և 1927—28 թվին—2 միլիոն 445 հազար ռուբլի: Դրա շնորհիվ հաջողվել է ճանապարհների կես մասը (հատկապես ապրանքների տեղափոխող) յերթևեկելի դարձնել: Ճանապարհներին շատ վնասներ են պատճառում հեղեղները և այդ աղետների դեմ Խորհրդային Ադրբեջանում պիտի համառորեն պայքարենք: Բացի պետական միջոցները ծախսելուց, ճանապարհները կանոնավոր վիճակում պահելու համար պիտի տեղական բնակչությանն աշխատանքային ծառայության կարգով գրավել այդ գործին:

Խորհրդային Ադրբեջանում յերկաթուղային ցանցը թույլ է. դրա համար ել առանձին ռայոններ յերկաթուղու կայարանների և նավահանգիստների հետ միացնող խճուղիները հսկայական նշանակություն ունեն. ճանապարհների վատ վիճակի մեջ ընկնելը նշանակում է ամբողջ տնտեսության քայքայումը, վորովհետև տնտեսությունը ճանապարհներից զուրկ լինելու դեպքում վաճառքի և մատակարարման շուկաներից կտրված է մնում:

Բաքու—Զուլֆա յերկաթուղու շինարարությունը ևս անցած յերկու տարվա ընթացքում առաջ է շարժվել: Ներկայումս ճանապարհը շահագործվում է մինչև «Կումլախ» (259 կիլոմետր) կայարանը, իսկ ճանապարհը հարթված և զցված է մինչև 267 կիլոմետրը, Քուռի և Արաքսի վրա յերկու մեծ կամուրջներ են շինվել: Ճանապարհի ամբողջ յերկարությունը 408 կիլոմետր է լինելու (մինչև Զուլֆա), իսկ 1928—29 թվին ճանապարհի ռելսները գցելը յենթադրվում է մինչև Մեշևան կայարանը հասցնել:

Ճանապարհների շինարարության նկատմամբ Խորհուրդների Համագումարի վորոշումը հետևյալն է ասում.

«Բանի վոր Ադրբեջանի պայմաններում ճանապարհների շինարարությունը հետագա զարգացման վճռական գործոններից մեկն է հանդիսանում, ճանապարհների շինարարության աշխա-

տանքների թափը պետք է ուժեղացնել՝ լրացուցիչ միջոցներ հատկացնելով և գյուղացիական բնակչության աշխատանքային ծառայության յենթարկելով»։

«Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր Բաքու-Զուլֆա յերկաթուղու կառուցումն ամենաարագ կերպով ավարտվի. այդ ճանապարհը հանրապետության (Խորհրդային Ադրբեջանի) ժողովրդական տնտեսության ընդհանուր սխեմի մեջ կմացնի ինչպես Նախիջևանի ամենահարուստ շրջանը, նույնպես և ուրիշ շրջանները։

Ժողովրդական լուսավորության ասպարիզում կատարված աշխատանքի մասին կարճ կխոսենք, վորովհետև գրքույկիս 3-րդ մասը նվիրված է այդ հարցին։

Աշխատավորների յերեխաների ուսուցման համար խորհրդային պետության հոգացողությունը սկսվում է նրանց դպրոց ընդունելուց ավելի առաջ։ Աշխատավոր մայրերին յերեխաների դաստիարակության հոգսերից ազատելու նպատակով, պետությունը ձգտում է այդ աշխատանքն ամբողջովին ընդգրկել. նա աշխատում է յերեխաներին՝ զարգացման առաջին իսկ մոմենտից այնպիսի պայմանների մեջ դնել, վոր ապահովի յերեխաների աշխատանքային, հասարակական, կուլտուրական և առողջապահական դաստիարակությունը։

Այնուհետև գալիս են առաջին աստիճանի դպրոցները։ Տեղական պայմաններին նայած, առաջին աստիճանի դպրոցները պետք է արտադրական զանազան թեքումներ ստանան (արդյունաբերական կամ գյուղատնտեսական) և ապահովվեն անհրաժեշտ ձեռնարկներով, ինվենտարով և սարքավորումներով։ Առաջին աստիճանի դպրոցները կանանց ազատագրության համար խորհրդային հասարակականության մղած սկզբնական բջիջներ են դարձել, վորն արտահայտվում է տղաներին և աղջիկներին միատեղ ուսում տալու մեջ. առաջին աստիճանի դպրոցներն են նույնպես, վոր հին կենցաղի դեմ պայքար են տանում։ Ուսման հետ միատեղ առաջին աստիճանի դպրոցներում յերիտասարդության ֆիզիկապես առողջացնելու աշխատանքն է սկսված և մարմնամարզության դասավանդումն ուժեղացրված է։

Խորհրդային Ադրբեջանում բնակվող բոլոր ազգություններին տարրական ուսում տալու նպատակով ներկայումս առաջին աստիճանի դպրոցներում դասավանդումը տարվում է իննը լեզուներով (թուրքերեն, հայերեն, ռուսերեն, գերմաներեն, մերձվոլգյան թաթարների լեզվով, վրացերեն, հրեական լեզվով, պարսկերեն, հունարեն և ասորերեն), Լուսժողկոմատի որդաններ

ի առաջ ներկայումս դրված է քրդերին, թալիշներին և լեզգիներին մայրենի լեզվով ուսում տալու մեծ խնդիրը և առաջին հերթին նրանց համար այբուբեն ու գրականություն ստեղծելը։

1928 թվի վերջին, Խորհրդային Ադրբեջանում գոյություն ունին առաջին աստիճանի 1,391 դպրոցներ՝ 6.620 խմբերով և 156 հազար 549 աշակերտներով։ Վորպեսզի պարզ լինի ժողովրդական լուսավորության գործում ունեցած նվաճումները, բավական է ասել, վոր 1914—15 թվին մեզ մոտ միայն 56 հազար աշակերտ է յեղել, վորոնցից միայն մոտ 2000-ն եր աղջիկ։ Խորհրդային Ադրբեջանի ժողովրդական լուսավորության ասպարիզում ամենացավոտ հարցը դպրոցական շինարարությունն է, վորովհետև դպրոցական պետական շենքերի քանակը շատ քիչ է։ Սակայն այդ ասպարիզում ել կառավարությունը բնակչության հետ միասին բավականին գործ է կատարել։ Այսպես, մեզ մոտ 1925 թվից մինչև 1928 թ. կառուցվել են 233 դպրոցներ, ներկայումս ավարտվելու վրա են 54 նոր դպրոցական շենքեր և ընթացիկ տարվա ծրագրով յենթադրված է 48 դպրոց կառուցել։

Առաջին աստիճանի դպրոցների ուսուցիչների վորակը բավականաչափ բարձրացել է և ներկայումս բոլոր ուսուցիչների 51%-ը մանկավարժական հատուկ պատրաստություն ունի, իսկ մնացածները 1926—27 թվից վերապատրաստության սիստեմատիկ դասընթացներ են անցնում։

Միասնական աշխատանքային դպրոցի շղթայի հետևյալ ողակը գյուղական վայրերում հանդիսանում են գյուղական յերիտասարդության դպրոցներն ու յոթամյակները՝ գյուղատնտեսական թեքումով։ Խորհրդային Ադրբեջանում ներկայումս կան 30 յոթնամյա դպրոցներ 14 հազար 966 աշակերտներով և 34 գյուղյերիտդպրոցներ։

Գյուղական յերիտասարդության դպրոցների նպատակն է գյուղերում գյուղատնտեսական կոլլեկտիվիստների և գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մարտիկների կադրեր ստեղծելը։ Յոթնամյակների և գյուղական յերիտասարդության դպրոցների հետևյալ ողակը գյուղատնտեսական տեխնիկումներն են հանդիսանում։

Բարձրագույն դպրոցները (ինստիտուտներն ու համալսարանները) մտնելու համար սովորողներին պատրաստելու նպատակով ստեղծված են 2-րդ աստիճանի և 9-ամյա դպրոցներ, ինչպես նաև պրոֆեսիոնալ տեխնիկումներ, վորոնք կրտսեր տեխնիկական ուժեր են պատրաստում։ 1927—28 թվի վերջին

Խորհրդային Ադրբեջանում յեղել են 43 II աստիճանի 9-ամյա դպրոցներ 16 հազար 971 աշակերտներով։ Տեխնիկումների քանակը մեզ մոտ հետևյալն է, 1) մանկավարժական տեխնիկումներ՝ 10,273 աշակերտով. 2) 26 պրոֆտեխնիկումներ և 4 պրոֆդպրոց 5560 աշակերտով. 3) յերաժշտական և գեղարվեստական 5 տեխնիկումներ։

II աստիճանի դպրոցների և պրոֆտեխնիկումների զարգացումը հնարավորություն է տվել մեր հիմնարկներին ու ձեռնարկներին մատակարարել՝ կոոպերատորներ, վիճակագիրներ, առաջին աստիճանի դպրոցների ուսուցիչներ, գյուղխորհուրդների, դայրանների, գավառական գործադիր կոմիտեների քարտուղարներ և այլն։

Գյուղացիների յերեխաների թիվն այդ դպրոցներում տարեցտարի աճում է և կառավարությունը ձգտում է այնպես անել, որ ապագայում աշխատավորների համար միջնակարգ կրթությունը ավելի մատչելի և նույնիսկ պարտադիր դառնա։

Յերեխաների դպրոցական դաստիարակության մեջ է մտնում նաև պակասավոր (դեֆեկտիվ) յերեխաների դաստիարակության ասպարեզում տարվող աշխատանքը. այդ կարգին են պատկանում մտավորապես հետամնաց, կույր և խուլ, ինչպես նաև մանկահասակ վոճրագործներ և անապատան յերեխաները։ Այդ նպատակին ծառայում են մանկատները, մանկական աշխատանքային կոլոնիաները և գիշերոթիկ ոժանդակ դպրոցը։

Մի քանի խոսք ել ասենք ստորին պրոֆեսիոնալ կրթության մասին, որը առայժմ իրականացվում է միայն Բագվում Բակպրոֆբերի ղեկավարությամբ։ Կրթության մատնանշված տեսակի նպատակն է որակյալ բանվորներ պատրաստելը և մեծ մասամբ կազմակերպվում է ուղղակի ձեռնարկություններին կից։ 1927—28 թ. Ադրբեջանում այդպիսի 16 դպրոց է յեղել 1,646 աշակերտով։ Բացի դրանից ունեցել ենք 73 զանազան դասընթացքներ մինչև 5000 աշակերտով։ Վորպես նվաճում պետք է նշենք 4 յերեկոյան դասընթացքներ կազմակերպելը, որոնք աշխատավորներին հնարավորություն են տալիս աշխատանքից ազատ ժամանակն իրենց որակը բարձրացնել։

Միասնական աշխատանքային դպրոցի սիստեմի վերջին ողակը մեր բարձրագույն դպրոցներն են հանդիսանում—Ադրբեջանի Պոլիտեխնիկական Ինստիտուտը և Պետական Համալսարանը։ Բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը բարձրագույն դպրոցները մտնելու համար պատրաստություն տալու նպատակով մեր բարձրագույն դպրոցներին կից ստեղծված են բան-

ֆակներ, որոնց մեջ 1927—28 թվին սովորել է 1298 ուսանող։

Խորհրդային կառավարությունը բոլոր միջոցներով ձգտում է մեր բարձրագույն դպրոցները պրոլետարականացնելուն և 1928—29 թվի ընդունելության հետևանքով պրոլետարական տարրը 73%-ի է հասել, որից 58,6%-ը բանվորներ են և 15,5%-ը գյուղացիներ։ Բարձրագույն դպրոցներում ուսուցումը հեշտացնելու համար մեր բարձրագույն դպրոցներն աստիճանաբար թյուրքիզացիայի են յենթարկվում։ Տարեցտարի, ինչպես ուսանողների, այնպես և ակադեմիական (գիտական) կազմի մեջ թուրքերի %-ն ավելանում է։ Բարձրագույն դպրոցներում ունենք 953 թոշակառու ուսանողներ (այսինքն ուսանողներ, որոնք սովորում են պետության հաշվին)։

Քաղաքական լուսավորության աշխատանքի ասպարիզում պետք է նշել անգրագիտության ու կիսագրագիտության վերացման աշխատանքի զարգացումն ու խորացումը, կոմունիստական լուսավորության և արտադպրոցական աշխատանքի զարգացումը։

Այդ աշխատանքը տարվել է խրճիթ-ընթերցարանների, ակումբների, դրադարանների, շարժական կինոների, ռադիո-սարքավորումների միջոցով։

Կոմունիստական լուսավորությունն անց է կացրվել խորհրդային-կուսակցական դպրոցների միջոցով, որոնք քաղլուսավորության աշխատակիցներ և կուսակցական պրոպագանդիստներ են պատրաստում։

Պետք է ասել, որ այդ ասպարիզում կանանց մասնակցությունը, հատկապես գյուղական վայրերում, նշանակալից չափով հետ է մնում։

Վերջապես անհրաժեշտ է մատնանշել և թուրքական նոր այբուբենի մտցնելը, որը ժողովրդական լուսավորության զարգացման վրա բարենպաստ ազդեցություն է թողել։

Պետք է հուսալ, որ լուսավորության աշխատավորների և ստորին խորհրդային ապպարատի աջակցությամբ կուլտուրական զարգացման գործը նոր այբուբենի շնորհիվ առաջիկա տարիներում բավականին առաջ կգնա։

Կառավարությունը և հասարակական կազմակերպությունները կանանց ազատագրության և նրանց հասարակական աշխատանքին մասնակից դարձնելու համար մշտապես համառ պայքար են տարել և շարունակում են տանել։ Վերջին յերկու տարվա ընթացքում կատարած աշխատանքը շոշափելի արդյունք է տվել, գյուղխորհուրդների կին անդամների թիվը 5,500-ից հասել է 8400 հոգու։

Նախընտրական կամպանիայի ժամանակամիջոցում 10 հազարից ավելի կանայք չադրան իրենցից շպրտել են: Այդ դեռ սկիզբն է. կառավարությունը հետագայում ևս անհրաժեշտ բոլոր միջոցները պիտի ձեռք առնի չադրան կամավոր կերպով վերացնելու և թուրք աշխատավոր կանանց հասարակական աշխատանքին ավելի ակտիվ մասնակից անելու համար:

Կառավարությունն այդ հսկայական աշխատանքը կարող է իրականացնել միայն բոլոր աշխատավորների մասնակցության դեպքում:

Անհրաժեշտ է հիշել, որ մուսավաթական կառավարության ժամանակ Ադրբեջանում ժողովրդական լուսավորության համար ծախսվել է տարեկան 600 հազար ռուբլի: Մեր ժամանակ 1925—26 թվին, այդ ծախսերը հասել են 11 միլիոն ռուբլու, իսկ այս ընթացիկ տարում—27 կես միլիոն ռուբլու, այսինքն բնակչության յուրաքանչյուր շնչին—11 ռուբլի 39 կոպ.:

Խորհուրդների Համագումարը լսելով կառավարության զեկուցումը ժողովրդական լուսավորության մասին, հավանություն և տվել կառավարության աշխատանքին իր հետևյալ բանաձևով.

«Համագումարն առանձին բավականությամբ է նշում կառավարության կատարած մեծ աշխատանքը կուլտուրական-սոցիալական ասպարիզում»:

Քիչ հոգ չի քաշել կառավարությունը նաև ժողովրդական առողջապահության գործի համար:

Վերջին յերկու տարվա ընթացքում բժշկական հիմնարկներ կազմակերպելու և համապատասխան ձևով սարքավորելու համար կատարված մեծ աշխատանքը հնարավորություն է տվել բնակչությանն ավելի լրիվ և կազմակերպված բժշկական ոգնություն հասցնելու: Բուժակային (ֆելդշերական) կետերն ամրացվել են և նրանց փոխարեն կազմակերպվել են բժշկական շրջաններ և դայրա-հիվանդանոցներ: Ներկայումս համարյա բոլոր դայրաներում հիվանդանոցներ և բուժարաններ (ամբուլատորիա) կան, որոնք բնակչությանը ձրիաբար բաց են թողնվում անհրաժեշտ դեղերը: Առողջապահության որգանները հատուկ խմբեր են կազմակերպել, որոնք քոչվորներին բժշկական անհրաժեշտ ոգնություն են ցուցց տվել, ինչպես նրանց սար բարձրանալու ժամանակ, այնպես և սարում մնացած ամբողջ ժամանակամիջոցում: Գավառական քաղաքները հարստացել են հրաշալի սարքավորված գավառական և շրջանային հիվանդանոցներով, որոնց համար հատուկ շենքեր են կառուցվել իսկ բարձր վոր-

բակի բժշկական հատուկ ոգնությունն աշխատավոր բնակչությանը հասցրել են Բաքվի կլինիկաներն ու գիտական-բժշկական հիմնարկները:

Առողջապահության որգանների նախազգուշական գործունեությունը ուժեղ կերպով տարածվել է քաղաքներում և աստիճանաբար տարածվում է նաև գյուղական վայրերում: Այդպիսի ձեռք առնվող միջոցների թվին են պատկանում՝ սանիտարական հսկողությունը, աշխատանքի պայմանների հետազոտությունը, մսուրների ու կոնսուլտացիաների կազմակերպելը և մայրերի ու յերեխաների պաշտպանության հիմնարկների աշխատանքը: Դրանց հետ միասին առողջապահության որգանները յերեխաների և մեծահասակ յերեխաների առողջությունը պահպանելու համար մեծ աշխատանք են ծավալել. դպրոցական հիմնարկների և պիոներ-ատրյադների աշխատանքներին բժիշկները մասնակցել են առողջապահական և սանիտարական աշխատանքը կանոնավորելուն: Դպրոցական հասակ ունեցող յերեխաների համար կազմակերպված են առողջացման հրապարակներ:

Առողջապահության որգանները մեծ աշխատանք են տանում և հատուկ հիվանդությունների դեմ տարվող պայքարի ասպարիզում, որոնց թվին են պատկանում աչքի հիվանդությունները, վեներական հիվանդությունները, թոքախտը և ջերմուտենդը (մալարիա): Այդ հիվանդությունների դեմ մղվող պայքարը հեշտացնելու համար ստեղծվում են հատուկ շարժական խմբեր և դիսպանսերներ: Պայքարը Խորհրդ. Ադրբեջանի հիմնական չարիք—մալարիայի դեմ,—վարակված է Խորհրդային Ադրբեջանի գյուղական բնակչության մոտ 70%-ը տարեցտարի նույնպես ընդարձակվում է: Այդ պայքարն ընթանում է, ինչպես նախազգուշացման գծով (ճահիճների չորացում և բնակչության խինինզացիա), այնպես և բուժման գծով—մալարիայի կայարանների միջոցով: Ժողովրդական առողջապահության գործը նշանակալից չափով առաջ կգնա, յեթե կոտրվի բնակչության թերահավատությունն ու դեպի բժիշկներն ունեցած անվստահությունը: Այդ նպատակով Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատը սանիտարական լուսավորության ակումբներ է կազմակերպում և բացատրական աշխատանք է տանում:

Հիվանդանոցային շինարարությունը տարեցտարի ծավալվում է և ընդգրկել է բոլոր գավառները, Այսպես, ներկայումս գավառներում կառուցվում են՝ մեկ շրջանային հիվանդանոց, չորս գավառական, մեկ քաղաքային և 18 դայրա-հիվանդանոցներ: Ժողովրդական առողջապահության ասպարիզում ել ավելի նվաճումներ ունենալու համար անհրաժեշտ է, որ բնակչությունը ինքը ինքնատուրքավորման միջոցով պետությանը ոգնի, որով-

հետև խորհրդային բժշկականության հսկայական անելիքները չեն կարող լուծվել առանց աշխատավորության մասնակցության։

Չնայած այն մեծ աշխատանքին, որ կառավարությունը տարել է ժողովրդական առողջապահության ասպարեզում, ստացված հետևանքները չի կարելի բավարար համարել։ Հատկապես պիտի ուժ տալ գյուղական վայրերում բժշկական ոգնության հետագա ծավալմանը, որովհետև ներկայումս հիվանդանոցային մի մահճակալին գավառներում 4 հազար բնակչություն է ընկնում, իսկ բնակչության յուրաքանչյուր 10 հազար մարդուն ընկնում է մի բժիշկ (1924 թ. 20 հազար մարդուն եր մի բժիշկ ընկնում)։

Խորհուրդների Համագումարն իր բանաձևի մեջ հետևյալն է ասել առողջապահության վերաբերմամբ՝ կառավարության տարած աշխատանքի մասին.--

«Համագումարը հավանություն է տալիս բնակչությանը և գլխավորապես գյուղական բնակչությանը բժշկական ոգնություն հասցնելու գործում կառավարության ձեռք առած միջոցներին,— հանձնարարում է կառավարության գյուղացիության համար մեծ չարիք հանդիսացող մալարիայի և մյուս սոցիալ-կենցաղային հիվանդությունների դեմ պայքարի համար ձեռք առնվող միջոցներն ուժեղացնել»։

Անցնելով առևտրին պետք է ասենք, որ նա անշեղ աճել է (համարյա 40%) պետական առևտուրը և կոոպերացիան մասնավորին շուկայից քշել են. վաճառքի գներն իջեցվել են առևտրական ապպարատի պահպանության վրա միջոցների տնտեսաբար գործադրելու հաշվին։

Վերոհիշյալ նպաստավոր մոմենտների հետ միասին առևտրական ցանցի ծավալումն անբավարար է յեղել։ Մասնավորին շուկայից քշելու կառավարության քաղաքականության ազդեցության տակ, մասնավոր առևտուրը 1927—28 թվին համարյա 10%-ով իր առևտրական ցանցը կրճատել է. մինչդեռ այդ ժամանակամիջոցում նոր առևտրական կետերն աճել են միայն 6,3%-ով։ Այդ բանն զգալի է յեղել, որովհետև կոոպերացիան բավականաչափ պատրաստված չլինելով, չի կարողացել բնակչության պահանջներին բավարարություն տալ և մեզ մոտ կոոպերատիվ և պետական խանութներում սկսել են պակեր առաջանալ։ Այդ բոլոր յերևույթները ստիպել են կառավարությանը ուշադրություն դարձնել առևտրական ցանցի ծավալման վրա, կոոպերացիայի նոր առևտրական կետեր բաց անելու միջոցով։ Սա-

կայն մասնավորը շուկայում դեռ շարունակում է վորոշ դեր խաղալ, թեկուզ և նրա մասնակցությունը շրջանառության մեջ տարեցտարի ավելի ու ավելի թուլանում է։

1926—27 թվին մասնավոր շրջանառությունը 33,1% է կազմել, իսկ 1927—28 թվին ամբողջ հանրապետության ապրանքաշրջանառության 26,8%-ը։ Մասնավորն առանձին նշանակություն է ունեցել մանրածախս առևտրի մեջ, վորտեղ նրա մասնակցությունը 1926—27 թվին ամբողջ մանրածախ առևտրի 50,85%-ն է կազմել, իսկ անցյալ տարի իջել է 40%-ի։ Մեծածախս առևտրի մեջ մասնավորը աննշան տեղ է բռնում (մոտավորապես 7 %)։

Ապրանքաշրջանառության մեջ կոոպերացիայի մասնակցությունը մեծ չափով աճել է։ Այսպես, գավառներում վերջին յերկու տարվա ընթացքում այդ աճումը հաշվում է 49,3%, իսկ Բագվում—58,6%։ 1927—28 թվին կոոպերացիայի ընդհանուր ապրանքաշրջանառությունը հասել է 207 միլլիոն ռուբլու։ Այս յերկու տարվա ընթացքում կոոպերացիան ֆինանսապես ամրապնդվել է և լիակատար հիմք կա հույս ունենալու, որ հետագայում նա հաջողությամբ կզարգանա։

Անցած յերկու տարվա ընթացքում գների իջեցման ասպարեզում մենք ցանկալի արդյունքը չենք ունեցել։ Գների ընդհանուր շարժման չափանիշը այսպես կոչված Պետպլանի բյուջետային նաբորն է (այսինքն հիմնական ապրանքների վորոշ խումբը)։ Ամբողջ նաբորի (արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների խումբը) արժեքը մասնավոր շուկայում 22,7%-ով է աճել։ Սակայն այդ աճումը բացատրվում է բացառապես գյուղատնտեսական ապրանքների գների աճումով, վորոնք 1926—27 թվին աճել են 4,7%-ով, իսկ 1927—28 թվին համարյա 34-ով, այն ինչ արդյունաբերական ապրանքների գները նույնիսկ մասնավոր շուկայում մոտավորապես 2 ու կես %-ով իջել են։ Յեթե վերցնենք կոոպերատիվային գները, ապա նրանց վրա ել է անդրադարձել գյուղատնտեսական ապրանքների գների բարձրացումը, վորի շնորհիվ ել Պետպլանի նաբորը 4 և կես տոկոսով բարձրացել է. արդյունաբերական ապրանքների խմբի գները իջել են 7 և կես տոկոսով, իսկ գյուղատնտեսական ապրանքների գները բարձրացել են 13%-ով։

Չնայած պլանային ապրանքների ներմուծումն Խորհրդային Ազրբեջան ուժեղացրված է (ցորենը՝ 24%-ով, մանուֆակտուրան—6%-ով, շաքարը—38%-ով) շուկան ամբողջ ժամանակ այդ ապրանքների պակասություն է զգացել։

Հաշվետու ժամանակամիջոցում Խորհրդային Ադրբեջանում զարգացել են գյուղատնտեսական մթերքների պայմանագրությունների (կոնտրակտացիայի) և մթերման գործառնությունները, որը ել ավելի է ամրապնդել գյուղացիության ապրանքային կապը պետական և կոոպերատիվային կազմակերպությունների հետ։

Առևտրի ասպարեզում նկատված թերությունները վերացնելու համար Խորհուրդների Համագումարը հանձնարարել է կառավարության համապատասխան միջոցները ձեռք առնել—իր ցուցումները տալով հետևյալ բանաձևի մեջ.

«Առևտրի և կոոպերացիայի նկատմամբ Համագումարը նշում է ներքին և արտաքին ապրանքային-շրջանառության անշեղ աճումը, մասնավորի դերի աննշան դառնալը, պետական ու կոոպերատիվային տեսակարար կշռի բարձրացումը, ինչպես նաև առևտրական ցանցի ռացիոնալիզացիան (այսինքն լավացնելը)։

«Ինչպես քաղաքում, այնպես և գյուղում սպառողներին ապրանք մատակարարելու մեջ նկատված դժվարությունները վերացնելու նպատակով—Համագումարը հանձնարարում է կառավարության-առևտրական ցանցի շինարարությունն ուժեղացնել՝ պետական և կոոպերատիվային ճյուղում ու ամեն կերպ սպառողական կոոպերացիայի աշխատանքը բարելավել, որին պետք է անհամեմատ ավելի ուշադրություն դարձնել, քան մինչև այժմ է դարձվել գյուղում, որտեղ սպառողական կոոպերացիայի ցանցն առանձնապես թույլ է զարգացած»։

Ադրբեջանի ժողովրդական տնտեսության զարգացման և ձեռք առած սոցիալ-կուլտուրական միջոցներն իրականացնելու համար արված ծախսերի ավելացման հետ միասին աճել է և հանրապետության բյուջեն (յեկամուտների և ծախսերի գումարը)։ Հանրապետության յեկամուտները, որ 1925—26 թվին 10 և կես միլիոն է յեղել, 1927—28 թվին բարձրացել, հասել է համարյա մինչև 19 միլիոնի, այսինքն համարյա յերկու անգամ ավելացել է. իսկ ծախսերը 22 միլիոնից աճել են մինչև 27 և կես միլիոն ռուբլի։ Յեթե հաշվի առնենք այն բոլորը, ինչ որ ստանում ենք անդրկովկասյան և միութենական բյուջեներից և հիմնական շինարարության համար են ծառայում, ապա բյուջեի ծախսերի մասը կկազմի 61 և կես միլիոն ռուբլի։ Սա պետական բյուջեյով։ Հետ չի մնում և տեղական բյուջեն (այսինքն գավառական դայրա-գործկոմների և Բագխորհրդի յեկամուտներն ու ծախսերը)։ Տեղական բյուջեյով բոլոր ծախսերի գումարն այս ընթացիկ տարում, հիմնական ծախսերի համար բաց թողված

վարկերի հետ միասին հսկայական մի թվի է հասել—60 միլիոն 300 հազար ռուբ.։ Յեկամուտի աղբյուրներից արժե կանգ առնել գյուղատնտեսական միասնական հարկի վրա, որովհետև այդ հարկը վճարողն ամբողջովին գյուղացիությունն է։ Չնայած գյուղատնտեսական աճման և նրանից ստացվող ընդհանուր յեկամուտի աճելուն, գյուղատնտեսական հարկը, գյուղացիությանը տրված մի շարք արտոնությունների շնորհիվ, համարյա չի ավելացել։ Այսպես 1925—26 թվին գյուղատնտեսական հարկ է հավաքվել 3 միլիոն 200 հազար ռուբլի, իսկ 1927—28 թվին ընդամենը միայն 100 հազար ռուբլի դրանից ավելի։ Բայց դրա փոխարեն, այդ յերկու տարվա ընթացքում, այդ հարկը վճարողների կազմի մեջ մեծ փոփոխություն է տեղի ունեցել։ Յեթե 1924—25 թվին հարկ վճարելուց ազատված է յեղել ամբողջ գյուղացիական տնտեսությունների միայն մի վեցերորդ մասը, ապա 1928—29 թվին հանրապետության մեջ բոլոր գյուղացիական տնտեսությունների համարյա կեսն ազատված է հարկ վճարելուց։

Սա նշանակում է, որ կառավարությունը պաշտպանելով չքավորների և միջակների շահերը, հարկային ամբողջ ծանրությունը ձգել է ավելի ունևոր և կուլակային տնտեսությունների վրա։ Բավական է ասել, որ բոլոր տնտեսությունների մի տասներկույերորդական մասը վճարել է հանրապետության մեջ հավաքված հարկի ամբողջ գումարի կեսը։ Խորհուրդների Համագումարը կառավարության աշխատանքը ֆինանսների ասպարեզում նշել է հետևյալ խմբագրությամբ.

«Յերկրի ժողովրդական տնտեսության մեջ յեղած առաջխաղացումը բնականաբար անդրադարձել է և հանրապետության պետական և տեղական բյուջեների վրա։

«Համագումարը նշում է գյուղատնտեսական հարկի նկատմամբ կառավարության բռնած ուղիղ գիծը, որն ուղղված է ավելի մեծ քանակությամբ չքավոր և սակավակարող տնտեսություններ հարկից ազատելուն և հարկային ծանրությունը ըգյուղական բնակչության ունևոր և կուլակային խավերի վրան ձգելուն»։

Համագումարը հանձնարարում է կառավարության մի շարք միջոցներ ձեռք առնել բյուջետային միջոցներն ավելի տնտեսարար ու ճիշտ բաշխելու, ինչպես և բյուջեների յեկամտային հիմքը բարձրացնելու համար, որպեսզի թե պետական, և թե տեղական բյուջեներում դեռևս ունեցած դեֆիցիտները (այսինքն բոլոր ծախսերը ծածկելու համար սեփական յեկամուտների պակասելը) վերանան։ Տնտեսությունը զարգացնելով և բարելավելով՝ կառավարությունը միաժամանակ ձգտել է պետական ապ-

պարատը պահելու համար արվող ծախսերը հնարավորության չափ կրճատել, ձգձգումների (վալակիտայի) և բյուրոկրատիզմի դեմ պայքարելու միջոցով ապպարատը լավացնել։ Պետական ապպարատի պահպանության համար ծախսվող միջոցները տընտեսելու ասպարեզում վերջին յերկու տարվա ընթացքում ստացված արդյունքները 5 միլիոն ռուբլու են հասնում, պետական ապպարատի լավացնելու և պարզացնելու հետևանքով հաջողվել է ծառայողների քանակը մի յերրորդական մասով կրճատել (36,5%)։

Ներկայումս նախապատրաստվում և մասնակի կերպով արդեն անց է կացվում պետական ապպարատի ընդհանուր զտումը, վորով ծառայողների շարքերից հեռացվելու են պրոլետարիատին անհարազատ տարրերը, ինչպես և բյուրոկրատացած, վալակիտչիկ և անտնտես ծառայողները։ Զտվածների փոխարեն պիտի առաջ քաշվեն բանվորներից և գյուղացիներից նոր կադրեր։

Հաշվետու ժամանակամիջոցի ընթացքում կառավարության գործունեության հետևանքով հաջողվել է նաև նշանակալից չափով բարելավել և բնակչությանը մոտեցնել արդարադատության որգաններին (դատախազությունը, դատարանները, հետաքննությունը)։ Կառավարության զեկուցման առթիվ իր ընդունած բանաձևի վերջին մասում Խորհուրդների Համագումարը նշել է արդարադատության և պետական ապպարատի ասպարիզում կառավարության տարած աշխատանքը և հետագա աշխատանքի համար տվել հետևյալ ցուցմունքները.

«Համագումարը հանձնարարում է կառավարության միջոցներ ձեռք առնել հետագայում ևս ամրապնդելու հեղափոխական որինականությունը և մասնավորապես ուժեղացնել ռեպրեսիաները (պատիժները) վատնիչների ու բանդիտների նկատմամբ»։

«Համագումարը առանձնապես նշում է նաև պետական ապպարատը լավացնելու և եժանացնելու, բյուրոկրատիզմի և վալակիտայի դեմ տարած պայքարի և այդ աշխատանքի մեջ աշխատավորների լայն մասսաներին ներգրավելու ասպարեզում կառավարության կատարած կարևոր աշխատանքը։ Համագումարը հանձնարարում է կառավարությանը չբավականանալ ստացված արդյունքներով և պետական ապպարատը լավացնելու աշխատանքը ուժեղացնել, ապպարատը զտել անհարազատ բյուրակրատական տարրերից և պրոլետարական պետությունը կառավարելու գործին քաշել լայն մասսաներին»։

* * *

Իր յերկու տարվա գործունեության հետևանքների մասին Խորհուրդների Համագումարին կառավարության տված զեկուցումը և Համագումարի վորոշումներն ասում են այն, վոր մեր տնտեսությունը տարեցտարի ամրապնդվում է և տարեցտարի ժողովրդական առողջապահությունն ու ժողովրդական լուսավորությունը բարելավվում ու զարգանում են։ Մեր տնտեսության ապագա ամման նկատմամբ կառավարության արած հաշիվները, վոր բացատրված են ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի մեջ, կապահովեն տնտեսության աճումը, նրա ինդուստրացումը և հետագա զարգացումը։ Արդյունաբերության ապագա շինարարությունն ուղղված է լինելու դեպի մանածային (բամբակ, մետաքս, բուրդ) և լեռնա-քիմիական ձեռնարկությունների զարգացումը և յերկաթ պատրաստող հսկայական ձեռնարկություն—Դաշքեսանի սարքավորումը։ Ուժեղ ելեկտրոկայանների շինարարությունը մեզ ենթադրում կմատակարարի, այդ գործում առաջնությունը Կարա-Սախկալի հիդրոկայանինը կլինի։

Գյուղատնտեսության ասպարեզում կառավարության ուշադրությունը դարձված կլինի տեխնիկական մշակույթների ցանքսերն ընդլայնելու վրա և առաջին հերթին բամբակի ցանքսերին։ Ձեռք առնվող լայն ագրոնոմիական միջոցներով առաջադրված բերքատվությունը 35%-ով բարձրացնել, իսկ բամբակի բերքատվությունը մեկ ու կես անգամ մեծացնել։ Պետք է բոլոր տնտեսությունները կոոպերացնել, իսկ հանրապետության բոլոր գյուղացիական տնտեսությունների մի հինգերորդական մասը կոլեկտիվ տնտեսությունների մեջ կազմակերպել։

Սոցիալ-կուլտուրական շինարարության ասպարեզում առաջադրված խնդիրներն ևս պակաս հսկայական չեն։ Ընդհանուր պարտադիր ուսում, գյուղական տնտեսության և արդյունաբերության համար կադրերի պատրաստություն, նոր կենցաղն արմատացնելու համար մղվող պայքարի ուժեղացում և կանանց ազատագրություն, բժշկական ոգնությունը բնակչությանը մոտեցնելը, նախազգուշական բժշկություն և սանիտարիա—ահա սրանք են մեզ առաջադրված խնդիրների ամփոփումը։

Խորհրդների յերկրի կապիտալիստական շրջապատը մեր առաջ մարտական խնդիր է դնում յերկրի պաշտպանունակությունը ուժեղացնել և դրա համար ել պետք է շատ մեծ ուշադրություն դարձնենք հեղափոխության հավատարիմ պահակ—մեր Կարմիր Բանակին։ Բոլոր այս խնդիրները պիտի լուծվեն Ադրբեջանի պրոլետարիատի սերտ [illegible] ամբողջ եներգիան պիտի դնի սոցիալիզմի [illegible] գործում, դեպի վորը գնում է Խորհուրդների յերկիրը։

ՀՍՍՌ-ԱՄ ՍՍՌ
Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄՈՍԿՎԱ

104 1038
1226
К
Са1429
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР
3
2013